

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2002 թվականի N 1174-Ն

**ՎԱՅՐԻ ԿԵՆՂԱՆԻՆԵՐ ԵՎ ԿԵՆՂԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ՈՒ ԱՌԱՆՁԻՆ
ՆՍՈՒՇՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 21-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է** Հաստատել՝

ա) վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության տարածքից վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու հայտի ու թույլտվությունների ձևերը՝ համաձայն NN 2 և 3 հավելվածների:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2002 թ. օգոստոսի 8
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 18-ի N 1174-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՎԱՅՐԻ ԿԵՆՂԱՆԻՆԵՐ ԵՎ ԿԵՆՂԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ՈՒ ԱՌԱՆՁԻՆ
ՆՍՈՒՇՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ**

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքից վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ (այսուհետ՝ վայրի կենդանիներ) արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու կարգը:

Սույն կարգով սահմանված դրույթները չեն տարածվում «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով կարգավորման ենթակա վայրի կենդանիների, դրանց մասերի և ածանցյալների ներմուծման և արտահանման, գյուղատնտեսական և արդյունազործական նպատակներով օգտագործման տրամադրված վայրի կենդանիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման N 7 հավելվածով և որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված ապրանքատեսակների արտահանման դեպքում:

(1-ին կետը լրաց. 22.10.09 N 1186-Ն, խմբ. 12.04.12 N 427-Ն, 11.02.16 N 137-Ն)

2. Հայաստանի Հանրապետության տարածքից վայրի կենդանիների արտահանումը և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից տրված թույլտվության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության տարածքից վայրի կենդանիների արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլտվություն ստանալու համար

Ֆիզիկական ու իրավաբանական անձինք (այսուհետ՝ հայտատու) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն են ներկայացնում հայտ, որի ձևը սահմանվում է սույն որոշման N 2 հավելվածով:

4. Հայտին կից ներկայացվում են՝

ա) արտահանման դեպքում՝ արտահանվող վայրի կենդանու ձեռքբերումը (հավաք, որս, մթերում, գնում և այլն) հաստատող փաստաթուղթը (պատճենը).

բ) ներմուծման դեպքում՝ արտահանող երկրի համաձայնությունը կամ թույլտվությունը (պատճենը) տվյալ վայրի կենդանու արտահանման համար կամ դրանց փոխարինող փաստաթղթերը (մաքսային հայտարարագիր, արտահանող երկրի մաքսային մարմնի կողմից կնքված կամ այլ տեսքով վավերացված ապրանքն ուղեկցող փաստաթղթեր), եթե այդ երկրի օրենսդրությամբ սահմանված է համապատասխան կարգ:

(4-րդ կետը փոփ. 24.12.15 N 1523-Ն, 11.02.16 N 137-Ն)

5. Հայտն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում իսկ վերարտադրված կամ բուծված ձկների արտահանման դեպքում՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը հայտատուին տալիս է համապատասխան թույլտվություն, իսկ մերժման դեպքում՝ գրավոր տեղեկացնում է մերժման պատճառների մասին:

(5-րդ կետը լրաց. 22.10.09 N 1186-Ն, փոփ. 24.12.15 N 1523-Ն)

6. Հայտը մերժվում է, եթե՝

ա) բացակայում են սույն կարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերը, կամ դրանցում բերված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը.

բ) հայտում նշված են արտահանող կամ ներմուծող երկրների ու միջազգային կարմիր գրքերում գրանցված հազվագյուտ և անհետացման վտանգված վայրի կենդանիներ, որոնց վերաբերյալ սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով տրված է բացասական եզրակացություն.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

7. Առանձին դեպքերում տվյալ վայրի կենդանու արտահանման կամ ներմուծման բնապահպանական նպատակահարմարությունը որոշելու համար Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից կատարվում է հարցում համապատասխան կազմակերպություններին կամ կազմակերպվում են մասնագիտական քննարկումներ՝ դրանց մասնակից դարձնելով գիտական և շահագրգիռ կազմակերպություններին մասնագետներին:

Մասնագիտական քննարկման ենթակա են նաև արտահանող կամ ներմուծող երկրների և միջազգային կարմիր գրքերում գրանցված հազվագյուտ ու անհետացման վտանգված վայրի կենդանիների գիտահետազոտական, արհեստական և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակներով արտահանման կամ ներմուծման համար ներկայացված հայտերը:

8. Վայրի կենդանիների արտահանման և ներմուծման թույլտվություններին համապատասխան արտահանման և ներմուծման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իր իրավասությունների սահմաններում իրականացնում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը:

9. Թույլտվություն տալու ժամկետի խախտումը, ինչպես նաև թույլտվության մերժումը կարող է բողոքարկվել վերադատության կամ դատական կարգով:

10. Վայրի կենդանիների արտահանման և ներմուծման թույլտվությունը տրամադրվում է հայտում նշված ժամկետով, որը չի կարող գերազանցել 1 տարին:

(10-րդ կետը լրաց. 24.12.15 N 1523-Ն)

11. Վայրի կենդանիների արտահանման և ներմուծման թույլտվության հիման վրա անձը կարող է իրականացնել արտահանման կամ ներմուծման միայն մեկ գործողություն:

(11-րդ կետը լրաց. 24.12.15 N 1523-Ն)

(հավելվածը լրաց. 22.10.09 N 1186-Ն, խմբ. 12.04.12 N 427-Ն, փոփ., լրաց. 24.12.15 N 1523-Ն, խմբ., փոփ. 11.02.16 N 137-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 18-ի N 1174-Ն որոշման

Ձև

Հ Ա Յ Տ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՎԱՅՐԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ ԵՎ ԿԵՆԴՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՆՍՈՒՇՆԵՐ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ**

_____ (կազմակերպության անվանումը, քաղաքացիների դեպքում՝ անունը, ազգանունը)

_____ (հայտատուի հասցեն, գտնվելու վայրը)

Խնդրում եմ թույլ տալ ներմուծել կամ արտահանել (ընդգծել)

_____ (վայրի կենդանու անվանումը, տեսակը)

_____ (քանակը (հատ) կամ կշիռը (կգ))

Ձեռքբերման վայրը և ժամկետը _____

Արտահանման կամ ներմուծման (ընդգծել) վայրը և նպատակը _____

Խնդրում եմ թույլտվությունը տրամադրել _____ ժամկետով

Հայտին կից ներկայացնում եմ՝

_____ 200 թ. _____ (ստորագրությունը)

(հավելվածը փոփ., լրաց. 24.12.15 N 1523-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 18-ի N 1174-Ն որոշման

Ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N _____

Հայաստանի Հանրապետության տարածքից վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու

Ուժի մեջ է մինչև _____ 200 թ.

Ներմուծել Հայաստանի Հանրապետություն _____
(երկրի անվանումը)

Արտահանել Հայաստանի Հանրապետությունից _____
(երկրի անվանումը)

Ուղարկողը _____

Մտացողը _____

(վայրի կենդանու անվանումը, տեսակը)

(քանակը (հատ) կամ կշիռը (կգ))

Հավաքածուի նկարագրությունը և նմուշների քանակը (հատ) կամ կշիռը (կգ) _____

Արտահանման կամ ներմուծման նպատակը _____

**Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարար**

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

_____ 200 թ.

(հավելվածը փոփ. 24.12.15 N 1523-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան